

ՊԱՏՃԷՆ

Տ. Կ.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ . . . .

Արժանապատիւ նախագահի և անդամոց միութեան քահանայից եկեղեցեաց Հայոց Երևան քաղաքի հարազատ որդւոց Մայր Աթոռոյս Նուիրեմք ողջոյն հանդերձ հայրապետական օրհնութեամբ։

Բերկրութեամբ սրտի ընկալաք զկանոնադրութիւն Միութեանդ, զոր ընթերցեալ Մեր՝ հաւան գտաք ընդ ամենայն յօդուածս նորին։ Ուրախալի է յոյժ, յորժամ հոգևոր պաշտօնեայք եկեղեցւոյ մերոյ իբրև լծակից եղբարս միահամուռ և սրտեռանդն ջանիւք նկրտին ընդհանուր և համերաշխ գործակցութեամբ անսայթաք վարել զվսեմ պարտիս հովուութեան և բարւոքել ընդ նմին զանտեսական վիճակ և ընդլայնել զմտաւոր հորիզոն քահանայից քաղաքիդ, որ անշուշտ ունի յինքն գրաւել զհամակրանս ժողովրդեան մերոյ։ Ըստ ամենայնի օգտաւէտ համարելով Մեր զնպատակ Միութեանդ և միանգամայն արժանի խրախուսանաց, այսու հայրապետական Կոնդակաւ մերով հաստատեմք զկանոնադրութիւն Միու-

թեանդ և մաղթեմք առ Տէրն տերանց պարգևել անդամոց Միութեանդ կար և զօրութիւն, համերաշխութեամբ, սիրով և աննկուն ոգւով գուն գործել, յառաջ մղել զանշեղ գործունէութիւն Միութեանդ և յարատևել յայնմ ի բարօրութիւն անդամոցդ և ի պատիւ ժողովրդեան։

Ողջ լերուք պահպանեալ և զօրացեալ ի խնամս Ս. Հոգւոյն և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց

Թ. 468
17 Մարտի 1907 ամի
Ի Ս. Էջմիածին։